Հետազոտական խմբի ղեկավար է նշանակվում պատմագիտության դոկտոր Արմեն Մարուքյանը: Ի տարբերություն նախորդ խմբի, նոր թեմայի կատարման աշխատանքներում մասնագետ է ընդգրկվում նաև Սփյուռքից (Մ. Գասպարյան):

Հետազոտական սույն խմբի կողմից ուսումնասիրվել են ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված մշակութային կորուստների վերաբերյալ բազմաթիվ արխիվային փաստաթղթերում, ականատեսների վկայություններում և մամուլի հրապարակումներում առկա վիթխարածավալ տեղեկությունները: Մասնավորապես, հետազոտական խմբի ղեկավար Արմեն Մարուքյանի կողմից ուսումնասիրվել են թեմային առնչվող Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության արխիվի փաստաթղթերը, ինչպես նաև այլ նյութեր ու հետազոտություններ:

Ի վերջո, հետազոտական խումբը՝ Արմեն Մարուքյանի, Մարտիկ Գասպարյանի, Անահիտ Աստոյանի, Անի Ոսկանյանի հեղինակությամբ գիտական հանրության գրասեղանին դրեց ստվարածավալ մի ժողովածու՝ «Հայոց ցեղասպանության մշակութային և նյութական հետևանքների հաղթահարման մեթոդաբանությունն ու գործիքակազմը» խորագրով: Այն լույս է տեսել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ: Գրքի խմբագիրն է պատմական գիտությունների դոկտոր Արմեն Մարուքյանը: Ստվարածավալ ժողովածուն (639 էջ) նախատեսված է գիտական լայն շրջանակների, ինչպես նաև Հայոց ցեղասպանության պատմության ու, մասնավորապես, պահանջատիրության հարցերով հետաքրքրվողների համար:

Հետազոտական խմբի ղեկավար Ա. Մարուքյանի կողմից ժողովածուում առանձին բաժնով ներկայացվել են նաև Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնահարցի վրա աշխարհաքաղաքական գործընթացների ու Թուրքիայի արդի ներքաղաքական զարգացումների ազդեցությանը վերաբերող բաժինները: Վերջինիս կողմից խորքային, ըստ ամենայնի քննական վերլուծություն է կատարվել ցեղասպանության ընթացքում և դրանից հետո հայության ունեզրկման՝ թուրքական իշխանությունների վարած քաղաքականության տեսանելի և ոչ տեսանելի խորշերը բացահայտելու ուղղությամբ: Մասնավորապես, վեր է հանվում, բացահայտվում ցեղասպանության ընթացքում հայ ժողովրդի ունեզրկման երիտթուրքական կառավարության կիրառած այսպես կոչված, «օրենսդրական» մեխանիզմների սահմանման և դրանց գործադրման բուն ընթացքն ու արդյունքները (սույն հիմնահարցն առաջին անգամ է խորությամբ բացահայտվում մեր պատմագրության

մեջ): Ըստ այդմ հիմնավորվում է, որ «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքով հայության զանգվածային բնաջնջման համար «իրավական» հիմքեր ապահովելուց անմիջապես հետո թուրքական իշխանությունները ընդունեցին (1915 թ. հունիսի 10-ին) «Լքյալ գույքի մասին» երեսունչորս հոդվածներից բաղկացած օրենքը: «Պատերազմական և քաղաքական արտակարգ պայմանների անհրաժեշտության բերումով տարագրված հայերին պատկանող անշարժ և շարժական լքյալ գույքի վարչական կարգադրությունների մասին» վերնագրով իրավական սույն փաստաթղթով տարագրյալ հայության ողջ ունեցվածքը համարվում էր լքյալ: Նշվում է ակներև այն հակասության մասին, որ առկա էր այստեղ, քանզի «Տեղահանության մասին» օրենքով հայերը ոչ թե ինքնակամ, այլ հարկադրաբար էին լքել իրենց բնակավայրերն ու ունեցվածքը: Այսինքն՝ նրանք չէին հրաժարվել այդ ամենի նկատմամբ իրենց օրինական իրավունքներից, ուստի այդ գույքի նկատմամբ ցանկացած գործողություն չէր կարող համարվել օրինական՝ անգամ, եթե այն տեղի ունենար պետական մարմինների կողմից: «Լքյալ գույքի մասին» օրենքի 2-րդ հոդվածի պահանջով տեղահանված հայերի անշարժ և շարժական գույքը, իբր, պետք է կնքվեր և ի պահ հանձնվեր պետության կողմից ստեղծվելիք վարչական հանձնաժողովներին (այսինքն՝ համարվեր անձեռնմխելի): Սակայն, գործնականում թուրքական իշխանություններն օրենքի տվյալ դրույթն ընկալում էին որպես տեղահանված հայերի անշարժ և շարժական գույքի յուրացման միջոց և փաստացիորեն իրենց էին վերապահում այդ գույքի ոչ միայն շահագործման, այլև տնօրինման իրավունքը:

Նույն օրենքի 3-րդ հոդվածը վերաբերում էր հայերի շարժական գույքի պահպանմանը, որը պետք է սեփականատերերի անուններով հաշվառվեր, գնահատվեր և ի պահպանություն փոխադրվեր եկեղեցիներ, պահեստներ ու մթերանոցներ: Սակայն իրականում հայերի տներից ունեցվածքի դուրսբերումը թուրքական իշխանություններին հնարավորություն էր տալիս ավելի հեշտությամբ տնօրինել նրանց անշարժ գույքի ճակատագիրը:

Բազմաթիվ կոնկրետ փաստերով և օրինակներով հիմնավորվում ու անհերքելի է դառնում այն տեսակետը, որ ցեղասպանությանը զուգահեռ իրագործվող հայ բնակչության համայնքային սեփականության, հոգևոր-կրթական կառույցների և մասնավոր անշարժ գույքի ու ունեցվածքի զանգվածային ոչնչացման ու նաև թալանի քաղաքականությունը չէր սահմանափակվում միայն Արևմտահայաստանի նահանգներով, այլ ընդգրկում էր կայսրության ողջ տարածքը: Վերոնշյալ դրույթը հեղինակի (Ա. Մարուքյան) կողմից ման-

րամասնվում է Ադանայի նահանգի Ադանա գավառի օրինակով և թվերով ու փաստերով ցույց է տրվում, որ թուրք զավթիչներին են անցել հայերի թողած վիթխարի չափերի հասնող հարստությունները:

Տեղահանված հայերի ունեցվածքը բռնազավթելու գործում երիտթուրքական իշխանությունները 1915 թ. սեպտեմբերի 13-ին ընդունեցին նոր օրենք, որի նպատակն էր վերահսկողության տակ առնել տեղահանված հայերի լքված անշարժ ու շարժական գույքի և ունեցվածքի յուրացման գործընթացն այնպես, որ ամբողջ հարստությունը փոխանցվի պետական գանձարան:

Այսպես քայլ առ քայլ բացահայտվում են իր պատմական հայրենիքում հազարամյակներ շարունակ ապրած հայ ժողովրդին կողոպտելու և ունեզրկելու գործողությունները, որոնց թուրք բարբարոսները «օրենքի» տեսքով օրինականության շղարշ էին հագցնում:

Այս շարքում վերջին ակորդը հնչեց 1931 թ. մարտի 28-ին ընդունած օրենքով, որի համաձայն «լքյալ գույքը» կարող էր վերադարձվել նախկին սեփականատիրոջ ժառանգներին, եթե վերջիններս ներկայացնեին այդ իրավունքը հաստատող փաստաթղթեր: Առաջին հայացքից օրինական թվացող սույն պահանջը, սակայն, իրականում որոշակի ենթատեքստ ուներ:

Թուրքական իշխանությունները հստակ գիտեին, որ ցեղասպանության ժամանակ զոհված հայերի ժառանգների միայն չնչին մասի մոտ կարող էին պահպանված լինել իրենց իրավունքը հաստատող սեփականության վկայականներ: Այս առումով հետևյալն է փաստարկվում. «Բնական է, որ զանգվածային կոտորածների և բռնագաղթի պայմաններում, երբ յուրաքանչյուր հայի կյանքն էր սպառնալիքի տակ, նրանցից քչերն էին մտածում իրենց հետ փաստաթղթեր վերցնելու և պահպանելու մասին: Եթե անգամ նրանք իրենց հետ վերցրել էին ինչ-որ փաստաթղթեր, ապա շատերը դրանք կորցրել էին գաղթի ճանապարհներին: Այսինքն՝ ստացվում էր, որ Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգների մի չնչին մասը կարող էր ներկայացնել համապատասխան փաստաթղթեր» (էջ 57):

Հետազոտական խմբի սփյուռքահայ մասնագետ, տ.գ.դ., պրոֆեսոր Մ. Գասպարյանը քննության է ենթարկել մշակութային ցեղասպանության (կուլտուրոցիդի), ինչպես նաև զանգվածային բռնազավթման հետևանքներով հայությանը հասցված մշակութային և նյութական կորուստների ծավալների հստակեցման, ճշգրտման, հաշվառման ու դրանց վերականգնման (հատուցման) հիմնահարցերը:

Հետազոտական խմբի անդամ, Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի գիտական աշխատակից Ա. Աստոյանի կողմից կատարված գիտահետազոտական աշխատանքները վերաբերում են Իզմիթի գավառի հայության տնտեսական վիճակին և Մեծ Եղեռնի հետևանքով նրա ունեցած նյութական ահռելի կորուստներին:

Ըստ վերջինիս դիտարկումների, Իզմիթի գավառի հայության տնտեսական և կրթամշակութային կյանքը XIX դարի կեսերից ունեցել է զարգացման իր առանձնահատուկ ուղին: Այստեղ հիմնված բազմաթիվ կրթական ընկերությունները նպաստել են կրթված ու կյանքին պատրաստ հայ սերընդի կերտմանը, որի առաջավոր ներկայացուցիչները, ծանոթանալով տնտեսության եվրոպական նորագույն մեթոդներին, իրենց նախաձեռնություններով ու ձեռներեցությամբ էապես սատարել են իզմիթահայության տնտեսական արագ բարգավաճմանը: Սակայն այդ ամենը կողոպտվեց կամ հրո ճարակ դարձավ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Ըստ մեջբերված տվյալների, տեղահանությունից առաջ շուրջ 20 հազարի չափ հայություն կար Ադաբազարում: Շուրջ 3500 հայ ընտանիքներից հազիվ 800 ընտանիք էր կարողացել փրկվել կոտորածներից: Ներկայացվում են այն ջանքերը, որ վերապրող հայերը գործադրեցին պատերազմի ավարտից հետո իրենց քանդված օջախները նորոգելու ուղղությամբ: Սակայն վերոնշյալ ջանքերն ու փորձերը չեզոքացվում էին թուրքական հին և նոր իշխանությունների բացահայտ կամ լռելյայն դիմակայությամբ: Այսպես, ըստ հեղինակի փաստերի, 1919 թ. նոյեմբերին Պարտիզակում կար 2500 հայ, որը լծված էր գյուղաքաղաքի վերաշինության գործին և այն աստիճանաբար կենդանանում էր, որից դժգոհ թուրքերը առիթը բաց չէին թողնում անընդմեջ հարձակվել հայերի վրա և նորանոր ոճիրներ գործել: Երիտթուրքերին փոխարինած քեմալականները գործում էին նույն ոգով և ոճով, մինչև որ Իզմիթի գավառն ամբողջապես հայաթափվեց:

Հետազոտական խմբի անդամ, գիտաշխատող Անի Ոսկանյանը ներկայացրել է «Այնթապի հայերի տնտեսական և կրթական վիճակը. 1915 թ. բնաջնջումը և ունեզրկումը» բաժինը, որում ուշագրավ տեղեկություններ են հաղորդվում Այնթապի ժողովրդագրական զարգացումների, տեղի հայերի տնտեսական վիճակի, Այնթապի արհեստների ու հայ արհեստավորների, նշանավոր ընկերությունների, ընտանիքների ու անհատ վաճառականների վերաբերյալ: Թվերով ու փաստերով, դեմքերով ներկայացված են Այնթապի

հայության կրթական հաստատությունները, դպրոցական ընկերությունները, մամուլի գործունեությունը:

Եվ այս ամենից հետո՝ 1915 թվականի ամենակուլ խորշակը, որը սրբեց-տարավ ամեն ինչ:

Ամփոփելով, արձանագրենք, որ սույն ժողովածուն բացառիկ կարևոր նշանակության գործ է, որը կոնկրետ ու բազմառատ փաստական նյութով արժանի հակահարված է տալիս պատմության՝ երեկվա և այսօրվա թուրք կեղծարարներին և նրանց ձայնակցողներին ու աջակիցներին:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

armenaraksyan@mail.ru